

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1915-*ի ապրիլը մեկնարկն ու գագաթնակէտն էր մարդկութեան հանդէպ գործուող յանցանքների, ոճիրների, որ դեռեւս նախորդ դարերից էին իրականացւում՝ սկզբնապէս ի բաղդատութիւն փոքր ծաւալներով, իսկ ԺԹ. դարասկզբին արդէն համապետական-համատարած, կազմակերպուած բնոյթ ստացան: Որոշուել էր աշխարհի երեսից վերացնել հայոց լեզուն, ջնջել Մեսրոպեան տառը... Սակայն խօսքը սոսկ հայերէնով հաղորդակցուողների մասին չէր. մեր լեզուին կարող էին տիրապետել նաեւ օտարները: Իրենք՝ թուրքերը, պետութեան ժողովուրդներին լեզուով չէ, որ տարանջատում էին: Անցեալի պատկերացումներով բնակչութիւնը բաժանւում էր՝ մահմեդականների, յունադաւանների, հայերի, կաթոլիկների, բողոքականների... (տե՛ս օր.՝* **Sükrü Server Aya**, *The genocide of truth, Istanbul Commerce University Publications, 2008, էջ 13*[1]*), ուր հայ ասելով, փաստօրէն, հասկանում էին Առաքելական Եկեղեցու զաւակներին, որովհետեւ հայախօս այլադաւանն արդէն կաթոլիկների, կամ, ասենք, բողոքականների խմբում էր յայտնւում: Արեւելեան Հայաստանն այլ կայսրութեան մաս էր կազմում, որի կենտրոնական իշխանութիւնները եւս չէին ցանկանում ազգութիւններ ճանաչել, եւ խմբաւորում էին՝ «պրաւօսլաւ, կաթոլիկ, մահմեդական, յուդայական, հայ-գրիգորեան*

[1] Գրքի հեղինակը կամեցել է «հեղինակաւոր» աղբիւրների քաղուածներով համոզել ընթերցողին, թէ Եղեռն չի եղել, եւ իր ձեռնարկած գործը ձեւակերպել է իբրեւ ժողովածուի վերնագիր՝ դրանով իսկ մատնելով իր նպատակը՝ «Ճշմարտութեան եղեռն»: Բնականաբար շարադրանքը երբեմն հակասում է ոչ միայն տրամաբանութեանը, այլեւ բանականութեանը. «The smallest Turkish settlements were killed down to the last man by the gangs of the Generals Adranik and Murat, and Churches were destroyed down to the very last stone» (Գեներալներ Անդրանիկի եւ Մուրադի խմբերը մինչեւ վերջին մարդը կոտորում էին թուրքական՝ փոքրիկ շէների բնակիչներին եւ մինչեւ վերջին քարն աւերում եկեղեցիները. էջ 655):

(իմա՛ առաքելական), այլ քրիստոնեայ, այլ ոչ-քրիստոնեայ» ընորոշումներով (տե՛ս **А. Е. Иванов**, *Высшая школа России в конце XIX - начале XX века, М., 1991, էջ 208-209): Եւ անկախ նրանից՝ մենք՝ հայերս, ընդունում ենք, կամ չենք ընդունում այս բաժանումը, միեւնոյնն է՝ արտաքին աշխարհն այսպէս է ճանաչում իրեն, այսպէս է ճանաչում մեզ: Այս բաժանումից ելնելով էր, որ շատերը, դաւանափոխ լինելով (ոչ միայն մահմեդականութիւն ընդունելով, այլ նաեւ քրիստոնէական յարանուանութիւններ), փրկւում էին թուրքական եաթաղանից. այսինքն թուրքերը նրանց այլեւս չէին դիտարկում իբրեւ հայ: Փոխարէնը թուրքական կառավարութիւնը չէր բաւարարւում իր տարածքներում բնակուող հայերի բնաջնջմամբ, այլ կամենում էր ոչնչացնել նաեւ Պարսկաստանի եւ Ռուսաստանի տիրապետութեան տակ գտնուող հայկական հողերի բնակչութեանը: Օտար հետազօտողի ձեւակերպմամբ 1918-ի մայիսի սկզբներին Երեւանը, Կաթողիկոսի նստավայր Վաղարշապատ-Էջմիածինը, Դիլիջանը, Սեւանայ լիճը եւ Նոր Բայազէտը պարուրող փոքրիկ մի տարածք էր ազատ մնացել թուրքերից (***Jacques Kayaloff***, *The Battle of Sardarabad, Paris, 1973, էջ 15): Պարսկական մասում թուրքական կանոնաւոր բանակը հասել էր Ուրմիայ՝ ետեւում թողնելով արնաթաթաւ անապատ: Եւ 1915-ին սկիզբ առած մղձաւանջն ասես վերջ չունէր, ասես չէր աւարտւում կոտորածների ապրիլը, չէր գալիս փրկութեան մայիսը: Այն եկաւ միայն 1918-ին: Այն բացուեց որպէս պայծառ ու լուսաւոր մի առաւօտ, որից նահանջում է խաւարը, ընկրկում թշնամին...*

Հարիւր տարի առաջ էր, որ լռեցին պատերազմական գործիքները, եւ հայկական յաղթանակն աւետելով՝ առաւել բարձր սկսեցին հնչել եկեղեցիների զանգերը, որոնք կռիւներին նախորդած օրերին երբեք չէին լռել: Մենք՝ այսօրուայ սերունդներս, չէինք կարող եւ չենք լսել մայիսեան յաղթանակների զողանջները. անկատար է մարդկային ունկը, այն չի կարող ընկալել մէկ դար հեռուից եկող կանչը: Սակայն հարիւրամեայ զողանջը պէտք է եւ պարտաւոր ենք մշտապէս լսել հոգու զգայարաններով, ապրել սրտի ամեն բջիջով, վերացարկել ամենօրեայ խոհերում, եւ այնժամ յաղթութեան զանգերը մեզ կառաջնորդեն դէպի նոր բարձունքներ: